Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<մաթեմատիկա>> առարկայի (10 դասաժամ) թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագիր
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
6. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
7. Որակավորման տարակարգ (առկայության դեպքում)
8. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
10. Ներկայացվում են բոլոր փաստաթղթերի բնօրինակները և պատճենները:

Փաստաթղթերն ընդունվում են **2018թ. հունիսի 12-ից մինչև հուլիսի 2-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2018 թվականի հուլիսի 6-ին՝ ժամը 10:00-ին**, Շիրակի մարզի <<Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ում. հասցեն՝ գ. Վահրամաբերդ, 16-րդ փողոց , շենք 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 444-211 հեռախոսահամարով: